



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2659

7






ՊՐՈՖ. ՅՈՒԶԵՎ ՇԱԱՆՆ



ԱԼՊԵՏԱՆ
ՏՏԵՍՈՒԹՅՈՒՆ

▲▲▲

ԳՅՈՒՂՋՐԱԿ * ՑԱՐԵՎԱՆԸ



1935





卷之三

ԱՍՈՎԻԳՈՂ թերթիկ -





Q
1919
1920

Գերմանիկանից քարդանուց

ՀԱՅ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Խարագույամբ պրոֆեսորներ

Խ. Ա. ԵՐԻՑՅԱՆԻ, Ն. Ա. ՏՐՈՒՅԿԻՆ,

Գ. Բ. ՔԱՂԱՔԱՐՅԱՆԻ



Перевод с немецкого

ԱԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Под редакцией профессоров

Խ. Ա. ԵՐԻՑՅԱՆԻ, Ն. Ա. ՏՐՈՒՅԿԻՆՈՒ

Պ. Բ. ԿԱԼԱՆՏԱՐՅԱՆ

Проф. ИОЗЕФ ШПАНН

АЛЬПИЙСКОЕ ХОЗЯЙСТВО

С предисловием
Проф. Х. А. ЕРИЦЯНА

A L P W I R T S C H A F T

V o n
Prof. Dr. JOSEPH SPANN

Armenische Übersetzung mit einem Vorwort

V o n
Prof. CH. ERIZJAN

СЕЛЬХОЗГИЗ 1935 ЭРИВАНЬ

ՊՐՈՖ. ՅԱԶԵԿԻ ՀՊԱՆ

ԱԼՓԱՐՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գրաֆ. Խ. Ա. ՅԵՐԻՑՅԱՆԻ
առաջարկանություն

14344 A II
39042



ՏԵՂԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱՅԻՆ ՍԱՐԳՈՅՆ

ԲՈՒԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ե 2

Ա Բ Ա Զ Ա Բ Ա Ն	IX
ՀԵՐԱԿՈՎԻ ԱՌԱՋՄԱՆ, ՀԱՅԵՐԻ ՄԱԿԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱԽՐԻ,	XVII
Ն Ե Բ Ա Ն Ա Բ Ա Խ Ա Ն	1

Ա Յ Ա Խ Ա Ն Մ Ա Ս

Գ Լ Ո Ւ Խ Ա Ա Բ Ա Հ Ի Ն

1. «Այս կամ չայց գողափարը	5
2. Ազգի տարածանամեմերը	6
3. Սուրբառամամ քառ բարձրարյան	6
4. Սուրբառամամ քառ պատի վրա պահազ անառնանախների	10

Գ Լ Ո Ւ Խ Ա Յ Ե Ր Կ Բ Ո Ր Դ

1. Արյան անառնարյան նշանակությունը	11
2. Ազրացման առավելությունները	13
3. Բարձրադրության ներդրմանամերը	15

Գ Լ Ո Ւ Խ Ա Յ Ե Ր Բ Ո Ր Դ

1. Արյան կերպությունը	22
2. Արյան շրացրած խօսի բազայինությունը	27
3. Արյան կերի ազդեցությունը կորի փառի վրա	31
4. Երիտասարդ կենդանիների անցման նշանացումը	32

Գ Լ Ո Ւ Խ Ա Յ Շ Ո Ր Բ Ո Ր Դ

1. Կենդանիների տարրեր տնտեկների ալպացումը	34
2. Մասագ անառնաներին ալպացման համար նախապարագանելը	36
3. Խուլերի ալպացումը	47
4. Ցեղների ալպացումը	51
5. Զիւրի ալպացումը	52
6. Վաշլարմերի ալպացումը	59
7. Այծերի ալպացումը	63

Գ Լ Ո Ւ Խ Ա Հ Ի Ն Գ Ե Ր Բ Ո Ր Դ

1. Կարմալպեր	64
2. Մնացարդների պատագարման և խազապահությունը	68
3. Կարմալպերի՝ խամալպի և վա՛շ կարմալով վերածվելը	69
4. Վճառակար ազդեցություններ ամառակ կավերի վրա	70

ԳԼՈՒԽ ՎԵՍԵՐՈՐԴ

1. Աղյուսն կայնամենառյանմերի բնօւրյանմերը. և այսի կարմանառյանմերի ավելացումն ու բարելավումը	76
2. Հափակ հոգերի անող բարելավումը	81

ՕԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Արդյան տնօնեառյան բարելավման տնօնեավարական միջնութիւն

1. Հայի խճանքն ու բարելավումը	85
2. Տերպիցուն հավանանմ ու մասնակիումը	92
3. Մորախոսերի վայրիցումը	94
4. Ճահիճների ցանութեամ	106

ԳԼՈՒԽ ՑԵՐԿՐՈՐԴ

1. Արդիքի պարարտութեամ	110
2. Պարարտութեամ ձեմերը	119
3. Բնական այլ պարարտություններ	127

ԳԼՈՒԽ ՑԵՐՐՈՐԴ

1. Վառազումն	130
------------------------	-----

ԳԼՈՒԽ ՀԱՐՐՈՐԴ

1. Արտաշեների մասին	137
2. Արտազամերին առաջարկադ հաստակ պահանջմներ	140
3. Ալպյուսներ	142

ԳԼՈՒԽ ՀԻՆԿԵՐՈՐԴ

1. Զար խոտի պաշարներ պապերում	145
2. Արրափոյ արաւարածեցում	148
3. Անուան ու արաւոց լենիքում	150
4. Անուարածներ	154
5. Ցամբարն ալպերում	156

ԳԼՈՒԽ ՎԵՍԵՐՈՐԴ

1. Մորովու կենամիներին զանելը	158
---	-----

ԳԼՈՒԽ ՑՈՒԹԵՐՈՐԴ

1. Համապարհների կառացում	160
------------------------------------	-----

Ա. Ռ. Զ. Ա. Բ. Ա. Ն

Լեռնային, կամ ինչպես ասում են արպյան արոտները, կազմում են մեր յերկրի բանած ամբողջ տարածության մոտ 30 տոկոսը: Արպյան արոտների տարածությամբ Առողջային Հայաստանը դասվում է արպյան բուսականությամբ հարուստ յերկրների շարքը:

Այդ լեռնարոտները ներկայացնում են իրենցից բնական էրից մի առաջ բազա, վորք փառարեն մեր յերկրի կաբնամատյին ժիշերքների արոտագրության խոշորագույն ազրյուրն և կազմում: Ետքնամատյին պարանքային արոտագրանքի գրեթե 70 տոկոսն առացվում է ինչնարոտնի հաջիբու: Այս հանգամանքը դարձնում է լեռնարոտները մեր անառնապուռաթյան գոյացության և զարգացման մեծագույն պատճենագույնը, նրա ամենազորեղ ազդակներից մեկը: Յեվ այդ վոչ միայն այսոր, այլև մանավանդ վազը — սուցիւթատական անառնապահության մասարում ծաղկման շրջանի համար, յերբ մենք ամբողջությամբ տիրացած կլինենք լեռնային արոտների բարեկամանը և սպառագրեման զժարությունները, ովրոնց վրա առանձնապես շեշտում և նույն պրոֆ. Շողաննը, կապիտալիստական, անհատական անտեսավարության պայմաններում զարերի ընթացքում արգելուկ են հանդիսացել արոտների սացիօնալ ողափորմանը: Արոտների ողափորման վոչ-առաջիննալ ձեւերը տիրապետող են յեղեր, և այժմս ել տիրապետողն են վոչ միայն մեզանում, այլև նույնիսկ Արևմտյան Յեղրոպայի կապիտալիստական կուլատուրայով հաղեցված մի շարք պետությունների ալզերում: Ճիշտ ե, մոտ մի դար ե, ինչ ալզերի սացիօնալացման խնդիրները սուր կերպով դրված են կապիտալիստական յերկրների առաջ, և դեռ մինչև այսոր ել անընդհատ ձեծվում են, և նույնիսկ բազմաթիվ միջոցներ են ձեւք առնվտում բարեկարգելու, արպյան անտեսությունը, ստկայն փաստն այն է, վոր ներկայումս այդ յերկրներում բարեկարդ ձեռվ տարվող անտեսությունների թիվը մեծ տոկոս չի

կազմում հետամնաց և պրիմիտիվ անտեսությունների այն ծով մասսիվում, վորը դեռ այսոր ել բնորոշ և կապիտալիստական յերկրների ալպյան անտեսության համար Մանր և միջակ անհատական տնտեսությունները, վորոնց ձեռքում կենտրոնացած և ալպերի խոչորագույն մասը, անանկ դուրս յեկան ալպերի բարիկարման և սացիոնալացման խնդրում, անկարող յեղան վերացնել դժվարությունները և այսոր բազմաթիվ են տնտեսության այն հետամնաց ձևերը, վորոնք դարերի ընթացքում ննացել են անխախտ, և այսոր ել բնորոշ կնիք են դնում յեկրոպական ալպյան գրեթե վողջ տնտեսության վրա:

Նույնիսկ ալպընկերություններից և անհատական խոչոր արնահետություններից շատ քչերին և հաջողվել ամբողջովին կիրառել արգերի բարելավման և ոգտագործման սացիոնալ հիմունքները:

Սակայն այն, ինչ անհնարին ե բուրժուական ընկերությունների և մյուս կողմից անհատական անտեսությունների, մանավանդ մանր և միջակ չերտերի համար, հնարավոր և կիրառել կոլիկիտիվ աշխատանքի մեր սոցիալիստական անտեսավարության պայմաններում: Ալպյան անտեսության բարելավման և ոգտագործման վոչ մի դժվարին զործ մեր սոցիալիստական պայմաններում չի կարող արգելք հանդիսանալ ալպյան անտեսության համատարած սացիոնալացմանը: Այլևլին, միմիայն աշխատանքի սոցիալիստական ձևերի պլանաշափ կիրառմամբ և բոլշևիկյան հմուտ ու ամրակամ զեկավարությամբ հնարավոր և իր վողջ մեծությամբ ծավալել ալպերի սացիոնալ ոգտագործումը:

Մեր սոցիալիստական անտեսավանության առաջ դրված կերի բազայի վիթխարի պրորիմի լուծումն այսոր, մեծ չափով, հախված և մեր ալպյան արտոնների բարելավման և սացիոնալ ոգտագործման չափից և տեմպից: Մեր առաջ ծառացած են մի չարք կարևորագույն խնդիրներ, վորոնց շուտափությթ լուծումը հիմնական պայման հետապնդանա ալպյան անտեսության արագատեմայ սացիոնալացման համար: Իրեն արդպիսին պետք և զիտել նախ իւսնային արտաների ոգտագործման դիմագրեկության վերացումը, մի հանդամաներ, վոր տակարդին իրականացված չե մեր մի չարք չըջանաներում, թեպետե այդ առթիվ գոյություն ունի մեր կառավարության հատուկ վարոշումը: Բոլոր արտասավայրերը, ուսունց խարության, պիտի և կցված լինեն կոլիկիտիվ և խորհրդային անտեսություններին, վորոնք և պատասխանառու: յին գաւանում պիտության առաջ ալպյան արտաները բարելավելու և սացիոնալ

ձեռվ ոգտագործելու համար: Միայն արտատեղիների նկատմամբ դայություն ունեցող դիմագրկության վերացման պայմանով հնարավոր և անցկացնել այն բարելավումները, վորոնք անհրաժեշտ են կիրառել սարարտուներում մեր սոցիալիստական անասնապահության զարգացման համար: Արոտների ոգտագործման արդի ձեռքը մեր սոցիալիստական սիստեմում պետք և համարել վոչ սացիոնալ: Արոտների շահագործումը տարվում և պրիմիտիվ, վոչ սոցիոնալ և անկազմակերպ ձեռվ: Ոգտագործման պլանավորում դայություն չունի, արոտների բեռնվածությունը վորոշ տեղերում հասնում և մեծ չափերի, և այդ բոլորի հետևանքով տարեցաւարի ընկնում և արոտների բերքը, աղքատանում և բուսակազմը և դրվում արոտարույսերի լավագույն տեսակներից: Արոտներն անկանոն ոգտագործելու հետևանքով քանդվում և մերկանում են սարալանջերը: Այս պայմաններն առաջ բերելով արոտատեղերի բերքատվության անկում, արգելակում են կենդանիների քանակի ավելացմանն ու սկրակի բարձրացմանը:

Ի՞նչ կոնկրետ միջոցառումներ պետք և կիրառել բարձրացնելու համար արոտների բերքատվությունը և միաժամանակ սացիոնալ հիմքերի վրա զնելու առատարեր արոտի ոգտագործումը: Այս այս խնդիրներն են, վոր արձարծվում են պրոֆ: Նպաննի դրգում: Այսանդ բերված են այն բոլոր միջոցառումները, վոր կիրառվում են այսոր յելլուպական մի չարք ալպերում — մասնավորապես բավարական, շվեյցարական և ամստրիական: Այդ միջոցառումները հիշյալ յերերների՝ ալպյան տնտեսությանը մեծ ոգում են ավել բարձրացնելով արոտների բերքատվությունը և կենդանիների մասակաթնային արտադրությունը:

Այդ միջոցառումները, հիմնականում յերեք կատեգորիայի յեն բաժանվում:

1. Ալպացման նպատակով պայմաններ ստեղծելը. — Ճանապարհների, կամուրջների և շենքերի կառուցումը, գետներ մակերեսի կարգավորումը, քարեր հավաքելը, թունավոր բույսերի և փշարույսերի փոշնչացումը, փոսեր լցնելը, քերձվածների ամրացումները, ջրի մատակարարման միջոցները և այլն:

2. Արտաքրօվական բերքատվուրյան բարձրացնելը. — Ճանիճների ցամաքեցումը և ջրի հոսանքի կանոնավորումը, վորովումը, արոտարույսերի սերմանումը, պարարտացումը՝ բնական և արհետական պարարտանյութերով և այլն:

3. Արածացմնելու տեխնիկայի բարելավումը. — Արոտների բա-

ժանումն ըստ կենդանիների տեսակների, հասակի և արտադրության։ Արտամասներում անառուններ հերթափոխ արածացնելու կիրառումը և այլն։

Միջոցառումների այդ կոմպլեքսը հեղինակի կողմից լուսաբանվում և անհատական անտեսովարության անսանկյունից և հենց այդ պատճառով՝ նրա առաջադրունքները զուրու չեն զալիս մենատնտեսավարությանը հատուկ ներ առնմաններից։ Ինքը հեղինակը չի կարող չզգալ ու չտեսնել այն փակուզին, վորի մեջ ընկել և թփրությ և մօսաւական արպացին այն միջինարի պայքարի մեջ, վոր նա ամեն որ անպոր կերպով մղում և բնության գեմ։ Կապիտալիստական յերկրների ալպացու ուժերից վեր և կիրառել բարելավումների այն կոմպլեքսը, վորի մասին մեծ յեռնդով քարոզում և պրոֆ։ Շպաննը։ Հենց այդ և պատճառը, վոր յեվրոպական ալպացին, ընդհանուր առմամբ, որիմիմագով տնտեսություն և վարում։ Հինն ու նախապաշտառումները զեսես զիրակլում են նպատականարմար և ռացիոնալ ձևերին։

Այդ փաստը գառնությամբ խոստովանում և և ինքը — պրաֆեսոր Շպաննը։

Իդեալիստական պիտի համարել պրոֆ։ Շպաննի այն տեսակեռը, վոր նա ունի ալպյան անտեսության բովանդակ բարեկամությունները կապիտալիստական սիստեմում մասսայորեն կիրառելու նկատմամբ։ Թանի գոյություն ունի մասնատիրությունն ու կապիտալիստական մրցումը, շահների բազիումն ու անտեսական կարողության տարրերություններն ու ձգությունների հակասությունները՝ կապիտալիստական յերկրներում խոսք անդամ չի կարող լինել ալպերի մասսայական բարելավումների վերաբերյալ։ Այդ միջոցառումների ամբողջական կիրառումը հնարավոր և միմիայն մեր սոցիալիստական անտեսության պայմաններում։

Մեր սոցիալիստական ալպյան անտեսությունը պետք և կիրառի միջոցառումների այդ կոմպլեքսն իր ամբողջությամբ և համատարած կերպով, մի բան, վոր մեր կոլեկտիվ և պլանային աշխատանքի պայմաններում դյուրին և իրականացնել կարճ ժամանակում։

Սակայն մեր սոցիալիստական ալպյան անտեսության սոցիոնալացման խնդիրներն անցնում են բուրժուական յերկրների ալպյան անտեսության որորկեմներից այն կողմը և չեն կարող բավարարվել ու սահմանափակվել յեվրոպական ալպերում կիրառվող բարելավումների վերևում նշան կոմպլեքսով։

Շապաննի զրբի մեջ բացակայում են արտափ բերքատված Այս հաշվառման խնդիրներն ու մեթօդները, բացակայում են կենդանիների արտածութ խոսի բանակի վարուժան խնդիրները՝ կտազգած կենդանիների անդառառ թյան և արտադրության հետ, և հենց մեծ մասամբ ել այդ որոշակառով բացակայում են արտաշին կերակրաներ նորմաժաման խնդիրները։ Այս խնդիրներն արտափ սացինալ ոչտափարձման և կենդանիների արտաշին անդի կանոնավորման ամենակարենոր պայմաններից են։ բավական չեն խոսի բարձր բերք առանալը, անդրածեցան և նաև արտացնելու միջոցով ույշքան խոս կերպնել կենդանութեան, վորքան, մեկուղ մտավոր չափով, հարկամար և նրան արտափ պայմաններում, ուրիշ խոսրակ, հարկովոր և նորմաժորել և արտաշին կերակրումը, վորքելով կենդանին մեր պահանջի չափ արտածի և արտուը վուանատակ չտա։

Պրոֆ. Շաղաննի զրքում այդ խնդիրները չեն արծարձնում, խնդիրներ, վորոնք զեռ բավարար չափով լուծելու չեն յելքապահուան վոչ պրակտիկայի և վոչ ել դիտության կողմէից, վոչ ել կարող են լուծվել կոպիտութիւնական անունավարության պայմաններում, վորոնք սակայն, ծուացած են մեր սոցիալիստական անունավառության առաջ և իրենց լուծումն են պահանջում։

Սակայն, անկախ այդ ամենից, պրոֆ. Շաղաննի զրքում առաջարած արգելու բարելավման միջոցների կիրառումը մեզանում կտա ավելի մեծ եվիճետ, քան այդ ստացվում և արտասահմանում, վորովնեան այդ միջոցների կիրառման հնարավորությունները մեղանում, անսարակուույս, ավելի մեծ են, քան կարմիր զծից զուրաց Այդ միջոցների կիրառումը կերպնապատկելի, կեռապատկելի մեր լիսնարանների կերի բազան, հնարավորություն կտա ավելացնելու դյուշանտեսական կենդանիների քանակը, բարձրացնելու նրանց արտադրականությունը և այլպիսով կնպաստի ամենաակարծ ժամանակամիջոցում լուծելու մեր սոցիալիստական անսահմանության պրոբլեմն այնպես, ինչպիս այդ հաջողվել և մեր կուսակցությանը՝ հացանատիկային բնադավառում։

Ավելորդ և այսուեղ նշել, վոր զրքում բերած միջոցառումներից չառակը ու նրանց ձեռքը չեն կարող փոխազբայի մեզ մոտ մեխունիկորեն, այլ նրանց նպաստէանարմար լինելը պետք և ստուգել մեր արգելու կոնկրետ պայմաններում։ Նրանք մեզ մոտ պետք և ընդունեն այն ձևերը, վորոնք ավելի յեն համապատասխանում ին մեր բնապատմական պայմաններին, և թե աշխատանքի կազմակերպական կառուցածքին։

Հատկապես ուշադրության արժանի յեն կաթնալպերի կաղմակերպական ձևերի զարգացման խնդիրները՝ տարբեր բարձունքների առնչությամբ և կաթնալպերի փոխադարձ կապը՝ հովիտների տնտեսության հետ։ Այդ խնդիրները կարուտ են հատուկ ուսումնասիրության՝ արոտների ոգտագործման և կաթնամթերքների տարբեր տեսակների արտադրության առնչությամբ։ Մենք չենք կարող կաթի մշակումը կենտրոնացնել միայն հովիտներում, ինչպես այդ դրվում ե սույն զբարի մեջ, այլ պետք ե մտածենք այնպիսի սարքագորում ատեղծել և այնպիսի կազմակերպական ձևեր մտցնել ալպերի տարբեր դոտիներում, վոր հնարավոր լինի թե շատ կաթ ստանալ, և թե արդ տեղերում լավագույն կաթնամթերքներ մշակել Այդ կապակցությամբ պետք ե լուծել նաև կթի կովեր արածացնելու և դրանց համար հատուկ արտոտաեղիներ առանձնացնելու խնդիրները վոչ միայն հովիտներում, այլ և ավելի բարձր դոտիներում։ Այլ կերպ են լուծվելու մեջ մոտ նաև ցուլերի արոտի խնդիրները, վոր չափով վոր ցուլերի ամենացյալուն աշխատանքը մեջ մոտ արգում և վոչ թե դարնան սկզբի ամեններին, ինչպես Շվեյցարիայում կամ Բավարիայում, այլ ամառը։ Մատղաշ կենդանիների դաստիարակության խնդիրները լեռներում նույնպես պիտի յենթարկվեն առանձին ուսումնասիրության, նման բազմաթիվ խնդիրներ պետք ե լուսաբանվեն մեր ալպերի կոնկրետ պայմանների կապակցությամբ։ Ալպերի բարելավումը, ճանապարհաշինարարությունը, անհրաժեշտ շենքերի կառուցումը, քարերից մաքրելը, թունավոր խոռերի և փշախոտերի վոչնչացումն և բարեկարգման բազմաթիվ այլ անհրաժեշտ միջոցներ պետք ե կիրառել մեր բոլոր սարարություններում։ Այս խնդիրները հրատապ են ու կարելի, վորքան և վերևում նշուծ բոլոր խնդիրները։

Արտօրույսերի բերքատվության բարձրացման խնդիրները (խոռացանությունը, պարաբացումը և այլն), այլ և արոտաշինարարության բովանդակ խնդիրների ձևակերպումը և նրանց կենսագործման մեթոդները պետք ե բարեկարգման դպիսն դարձյալ մեր սեալ պայմաններից։

Պրոֆ. Շպաննի աշխատությունը մեղ հարուստ նյութ և տալիս արյուն տնտեսության բարեկարգումների մասին։ Դրանումն և զբարի հիմնական արժանիքը։

Դիբջն արժեքավոր և նաև նրանով, վոր ինչպես հեղինակն և առում, արդյունք և յերկար տարիների պրակտիկ աշխատանքի

և դիտողություններին նա աշխատել և տալ պրակտիկային այն ամենը, ինչ ներկայումս լավագույնն է համարվում յելլոպական արայիան անահետոթյուններում։ Մեղ մնում և ջրջահայաց և քննազատական մռահցումով կիրառել մեր ալգերում այն ամենը, ինչ ավելի ողտավեա կհանդիսանա մեր ուրույն պայմաններում։

Եպաննի աշխատության հայերեն հաբատարակությունը, վոր թարգմանված և գերմաներենից, կարող և վերեռում բերած վերապահումներով, լավագույն ուղեցույցը դառնալ շրջանային ակտիվի և խորհրդային ու կոլեկտիվ անահետոթյուններում աշխատադիմության համար, սակայն կարող և ծառայել նաև իրեն ոժանդակ ձեռնարկ՝ զյուդատնահետական և անանարուծական ԲՌԻՀ-երի և աերնեկումների ուսունողության համար։

Դիրքը հանձնարարելի յի մանավանդ արայիան արոտների ուսումնասիրությամբ և շինարարությամբ զբաղվող կաղրերին ու անանարուծներին։

Պրոֆ. Շորաննի սույն աշխատության հայերեն թարգմանությունը յենթարկվել և խոշոր կրնատումների թողնված են այն գլուխուններն ու մասները, վորունք արժեք են ներկայացնում մեզ համար։ Բացի զբանից, անհրաժեշտ ակդերում, ծանոթության կարգով, արժան են դիտողություններ հեղինակի վորոշ ահասկանների նկատմամբ և իրեն լրացնումներ մեր իրականություններ շերգած են համապատասխան տվյալներ ու դիտողություններ։

Կրճատումները հիմնականում կատարել են պրոֆ. Ն. Տրոիցին և պրոֆ. Պ. Քալանթարյանը։

Բույսերի հայերեն անունների թարգմանությունը ճշտել և խմբագրել ե պրոֆ. Պ. Քուլանթարյանը։

Այդ տերմինների վորոշ մասը թեև չի ընդհանրացված մեր բուսաբանների շրջանում, սակայն, քանի վոր բուսաբանական հայերեն տերմինարանությունը գեռ գտնվում և իր ձևավորման սկզբնական շրջանում, նապատակահարմար գուտնք պահպանել նախկին խմբագրության կողմից ընդունված տերմինները, տալով միաժամանակ բույսերի լատիներեն անունները։

Անդրեկովկասի ալպյան բուսականության մասին յեղած ծառնոթությունները պատկանում են պրոֆ. Տրոիցիուն, իսկ ընդհանրապես այն լուրջը ծանոթությունները, վոր կրում են պ.Տան. խմբ. ստորագրությունը, կատարված են Ն. Տրոիցիուն և Պ. Քալանթարյանի կողմից։ Մնացած մյուս ծանոթությունները «Տ. Յե.»

ստորապրությամբ և զլցի վերջնական խմբաղբումը պատկանուի ե ինձ:

Դեռ և վուզունել Գյուղհրատի նախաձեռնությունը դյուշատնահսության կլասիկ գրականության հրատարակությունների համար և մասնավորապես պրոֆ. Շաղաննի սույն աշխատանքյան վորը չոչափում և մեր անասնապահության ամենահրատապ խընդիրներից մեկը:

Պրոֆ. Խ. ՅԵՐԻՑՅԱՆ

ՀՐԱՄԱՆ ԱԽԱԼԾՈՒՅԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԳՈՒՅԻՆ

VORWORT
DES VERFASSERS ZUR ARMENISCHEN ÜBERSETZUNG

Die Hoch — und Mittelgebirge auf unserer Erde nehmen in ihrer Gesamtheit eine ungeheure Fläche ein. Auf großen Teilen dieser ausgesprochenen Höhengebiete finden Millionen unserer nützlichsten Haustiere während der guten Jahreszeit gesunde Unterkunft und bei sachgemäßer Bewirtschaftung reichliche und würzige Nahrung. Diese fruchtbaren riesigen Bergweideflächen zielbewußt zu verbessern und sie weitgehend durch Urbarmachung in günstigen Lagen zu vergrößern, muß eine der schönsten Aufgaben jenes Staates sein, dem die Ernährung seines Volkes ernstlich am Herzen liegt.

Es ist sehr erfreulich, daß auch in Sowjet-Armenien für die Förderung dieser hochwichtigen Landwirtschaftlichen Betriebszweiges in weitschauender Weise gearbeitet wird. Wenn die Verbesserungsarbeiten mit Fleiß und zäher Ausdauer durchgeführt werden, so können sie auch dort im Laufe der Zeit die schönsten Früchte zeitigen.

Dazu möge mein Buch, das ich auf Grund reicher praktischer Erfahrungen in Alpwirtschaftsbetrieben Bayerns, in Österreich, in der Schweiz und in Italien, aber auch auf Grund vieler wissenschaftlicher Erkenntnisse geschrieben habe, einen wesentlichen Teil beitragen. Insbesondere verweise ich auf jenen umfassenden Abschnitt meines Werkes, der über die Alpverbesserungen handelt; gerade dieser umfangreiche aus der Praxis heraus behandelte Teil des Buches kann auch für die dortige Alpwirtschaft sehr viel Nutzen schaffen.

Mögen alle Anregungen und Ratschläge des vorliegenden Buches auf einen fruchtbaren Boden fallen und zum Segen der dortigen Alpbauern und des ganzen Landes gereichen.

Prof. J. SPANN

Մեր յերկրադաշտի մակերեսի բարձր և միջին լեռնաշղթաները բռնում են հսկայական տարածություն։ Այս բարձունքների մեծագույն մասի վրա մեր ողառվար կենդանիները, տարվա վորոշամանակ, դժոնում են առողջ բնակավայր և կանոնավոր անտեսություն վարելու դեպքում՝ նաև հարուստ և հոտավետ կեր։ Այս պարարտ, հսկայական լեռնային արոտների նպատականարմար բարելավումը և նրան անպիտօթյան ամենակարենոր խնդիրը, վորը լրջարեն մտանոված և իր յերկրի պայմանակության անողի գործով։

Ծառ ուրախալի յէ, վոր Խորհրդային Հայուսանուում պյուղանատեսության այդ կարեւոր ճյուղի զարգացման համար և հեռատես աշխատանք և տարվում։ Այս կարեւոր աշխատանքները, յեթե տարվում են պատշաճ աշխատասիրությամբ և տոկունությամբ, անպայման կտան հաջող հետևանքներ։

Են հույս ունեմ, վոր իմ գիրքը, վորը գրված և Բագարիայի, Ազստրիայի, Շվեյցարիայի և Իտալիայի արևյան անտեսության գործնական վորձառության և գիտական ուսումնասիրությունների հիման վրա, կարող և այդ աշխատանքներում ոգտակար դեր կատարեն Հատկապես յև մատնանշում ևմ իմ գրքի ամենամեծ բաժնի վրա, վորն արծարծում և ազպիրի բարելավման խնդիրները Հատկապես այս զորձնական աշխատանքների հիման վրա գրած գլուխը կարող և այդտեղի պայմանների համար ևս ոգտակար լինել։

Թող այս զբքում ընթած խորհուրդներն ու դիտողությունները պարարտ հող գանեն և ոգտակար լինեն այդտեղի ալպյան շրջանների զյուղացիության և ամրող յերկրի համար։

Պատփ. 8. Եղիսակ



Johnine

ՆԵՐԱՇՈՒՌԻՑՑՈՒՆ

Դեռ վաղ ժամանակից մարդը դիտակցել և ալպերի ոգտակարությունը և կարագացել և ոգտագործել այն, քանի վոր համեստներուն վար ժամանակներում նրա անառունների կերի մեծ մասն արդյան տարածություններն եզին ժամանակաբարում:

Հավաստի յեւ, վոր նախապատմական ժամանակաշրջանում արգերի վրա մողովուրդ և ապրել և այնուեզ կայուն բնակավայր և ունեցել Պատմական հետազոտությունը դրեթե անվիճելի կերպով պարուն և, վոր բազմաթիվ գեղքերում ալպյան շրջանում նախ յեւ տուազ առեւր յեւ տպա միայն նովիտներն են Տնօնական ոգտագործման յենթուրիթիլ: Այս հանգամանքի վոչ անկարեռը պատճառը, վոր շատ գեղքերում բացատրում և լեռներին տրված նախապատմությունը, հովիտների այն ժամանակից վաս վիճակն եր Առօնահովիտների խոշորագույն մասը վաղ ժամանակներում չափազանց նախնային եյին, վորի պատճառով և այդ ժառագուրկ գայրերը վորպես արոտ չեցին ոգտագործվում:

Ասույզ ապրոցուցված և նային, վոր այն ժամանակներում բարձունեցի կիմինն անհամեմատ մեզմ եր: Այսունետեւ ալպերում ավանդություններ ու ննապիտության կողմից յերաշխավորված ապացույցներ կան, վոր յերկրորդական շատ հովիտներ վոչ թե զլատագոր հովուց, այլ լեռներից են սկսել բնակելի դառնալ:

Վերոնիշյալ պնդումը պաշապանություն և գտնում այն իրողության կողմեց, վոր առաջներում տոհմային մայրհամայնքները, վորոնցից առաջանում եյին զուսար համայնքներ, բնակվում եյին վոչ միշտ հովիտներում, այլ շատ հաճախ մոտակա լեռնաշրջայի լանջերի վրա: Այս բոլոր փաստերը խոսում են հոդում այն պնդման, վոր բազմաթիվ ժողովուրդների տոհմերն ու ցեղերը նախապես բարձունքներում են բնակվել և այսուեղից են զեսի հովիտները տարածվել: Թափառական խանարած տոհմերի նոտակեցությունը շատ գեղքերում իր սկիզբը պետք և առած լինի ալպերում:

Ակղբներում արտաներն առանձին ընտանիքների կողմից են

միայն բնակելի դարձել: Դա հայտնի յէ այն փաստերից, զոր
խւկական արտօնային վայրերում խոշոր բնակառակեր չկան: Հոգուոտ
դրա յէ խոսում նաև նովիկական խրնիքների զիրքը, զորոնցից
շատերում նախապատմական ժամանակվանից շատ քիչ հետքից
կան և զորոնք շարունակ վերակառուցիւլ են նովիկին վայրե-
րում: Նկատվում ե, զոր հովիկական խրճիթները, առանց բացա-
ռության, այն տեղերում են կառուցվել, ուր նրանց զիրքը
տնտեսուկան հիմունքներով հեշտությամբ կարող ե բացարպել:
Հովիկական այս խրճիթները կառուցվել են լուսագույն արտա-
մեջ կամ դրա աշխիքական մոտակայքում, լուս աղբյուրի մոտ,
ըստենպաստ հոգի վրա, չոր վայրում կամ ել՝ ամելի հարժար
բարձունքի վրա: Եերեք չի կարելի պատահել հովիկական խրճի-
թի կամ դրանց մասուրդների այնպիսի վայրերում, ուր հաջո-
ղությամբ պաշտպանիլու մոմենտն առանձնապես աչքի ընկելի:
կամ ել՝ դրան առաջնակարգ նշանակություն արժած լինի: Այդ
հանգամանքը պարզապես ցույց է տալիս, զոր համախակի հար-
ժակութիւնը տեղի չելին ունենում: Դրանից պետք է նաև յեզրա-
կացնել, զոր առանձին առմեները շատ ցրված ու փակված կյանք
ելին վարում ե իրար հետ քիչ ելին հարաբերություն ունենում:
Եենային տնտեսությունից հովար անտեսության անցումը, հա-
մեմատարար արագ պետք է տեղի ունեցած լիներ, զորովներ,
հենց զոր արպյան արտաներն իրենց մայուն տերերն ունեցան,
վերջիններին հետապն սերունդները կամ նորեկները ստիպած
պիտի լինելին բավականալ հովիաներով և զորովն նոր զա-
ղությացիներ, մշակության միջոցավ, աստիճանաբար պետքական
հոգերը նոր տարածություն պիտի ստեղծելին իրենց համար Հո-
վիտների բնակչությունը չուներ, ուսկայն, արտօնային տնտեսու-
թյամբ զրազվելու, համար հովային առարածություն: Այդ պատ-
ճառով ել նրանք պետք է զիմելին հայահատիկային անտեսու-
թյան հախապես սովորելով այդ հարթագայլրից զաղթածներից,
յիթե իրենք այդ ուղղությամբ բավարար տրաղիցիտներ չունե-
նային: Դրանից հետո լուսավորությունն ու կուլտուրան հովիտ-
ներում սկսեց առաջադիմել: Զանազան զրգապատճառներ լեռ-
նաբնակներին ստեղծեցին աստիճանաբար մոտակա հովիաներն
իջնել, իրենց լեռները, սակայն, զորպես ամառային արտառակելի
պահելով: Այսպիսով, միանուածայն բնական ձևագործությունը, ան-
ցում կատարվեց դեպի այն ձեր արպյան տնտեսությունը, զոր-
ովիսին զեռ այժմ ել վարում են զանապան վայրերում:

Այս ձեռք տառջ յեկալ այն յերեսույթը, վոր հովիտներում տպրոսդ համայնքների առանձին բնաւանիքներ ալպերից ողտօվելու իրավունքը ունեն, մինչզգես մյուսներն արդ առավելությունը չեն ժամանակում։ Այս տեղի շեր ունենա, յեթե վերջիններիս հովիտներում համառափելուց առաջ ալպերն արգեն սեփականատերեր չունենային։ Բայց վոր դրանք ձգտում եյին ալպյան արոտների առավելություններին մասնակից լինել, յերեսում և այն հանգամանքքից, վոր վաճառքի միջոցով ալպերից ոգտվելու իրավունքը համայնքի մեջ ավելի ու ամենի յե տարածվում։

Հետային զանազան յերկրների ալպյան անտեսության նորոգույն պատմությունն ուսումնասիրելիս կարելի յե նկատել վոր ալպյան բարեխափումներն ու մըրազրության այս ճյուղի դարպացման համար ձեռք տանգում միջոցները նոր ժամանակներից են սկսելու։

Առաջներում արքածված ընդհանուր կարծիք կար, վոր ալպերից պեսք և միայն պատմել և վերցրած ողուտից վոչ մի բան չողեանի հետ տալ ալպերին։ Այսուղ զարերից իվեր բասի ամենաբարյան գիշատիչ աղոտպործություն և տարվել, այն ինչ պյուշառականացնության մյուս ճյուղերի առաջադիմության համար ձեռք տանգ միջոցները միշտ ավելի շուտ են սկսում։ Եվելցարիայում արգեն 17-րդ զարի վերջինքն և 18-րդ զարի սկզբին շատերը (Եսոյին լույլերը, Հեները, Հանիդոյլը և ուրիշները) մատնանշեցին ալպյան անտեսության խոչըր նշանակությունը։ Այս վաղ մատնանշումը կազմած և այն հանգամանքին հետ, վոր Եվելցարիան տասմեն չափամ լուսային և և ալպերի ու բլուրների համեմատությամբ հարթափայրը շատ ավելի քիչ տարածություն և բանում։ Ալյուրիայում այս ուղղությամբ շարժում առաջ յեկալ 19-րդ զարի կեսին։ Եվելցարիայից և Ավստրիայից այս շարժումն անցագ Բավարիա։ Մեղնից ավելի հեռու ընկած լիոնային յերկրներում այսոր ել զեն չեն մատնում ալպյան արոտների բարեխափման մասին։

Ի՞նչոք պեսք և բացարել այն, վոր համեմատարար յերկար ժամանակ արպյան անտեսության առաջադիմության համար վոչինչ չի արքած և զյուղառանունություն այս ճյուղը համարվել և ի թերեւ այժմ ել համարվում և վորպես վոչ կարեսր մի դորձ։

Հարթավայրի և հովիտների զյուղառանունությունը նախ և առաջ ու անկատկած այն պատճառով և բարեխափմում, վոր նախ այսուղ ինտենսիվ անտեսություն կարելի յե վարել և ասկ վորել

բարեկավման հետևանքով առաջ յեկած սենտան այստեղ ավելի ակնհայտնի յէ լինում: Հոգտում և հարթավայրում վարեկանողը, մարդող և տիեզերն ու արտաք համախ ամերդջ տարին տնտեսություն վարողի հնոց աչքի առաջն են, զրա համար ել, բնականարար, մարդ նրանց վրա տվելի մեծ ուշադրություն կարող է դարձնել: Արդյան անտեսության աշխատանքը, զոր հաճախ ստար մարդկանց խնամքին և թողնվում, սովորաբար յերեք ամիս և անում: Այսունկուն, ալպերի բարեկավման աշխատանքները, յերբեմն շատ հեռու գտնվելու և հաճախ փոխադրական շափականց գժվարին հնարավորությունների պատճառով՝ հոգտի աշխատանքներից անհամեմատ ամիսի ծանր են: Բնության ուժերի դեմ վարած կովով շատ բան այսուղ ձեռք և բերվում իրատ գժվարությամբ, իսկ շատ բան ել ձեռք բերել չի հաջողվում: Այստեղ ստորագաս դեր չի խաղում նաև անձնավորության խնդիրը: Ալպերը կառավարելու գժվարություններն ել մեասում են զործին: Արդյան անտեսության բազմաթիվ ձեսնարկություններում արտակարգ ջանքով ու համար համբերատարությամբ միայն զգալի արգյունք և ստացվում:

Այս բոլոր գժվարությունները փաստորին գոյություն ունեն, բայց ըստ ցանկության կարող են հաղթահարվել: Ցեղ նկատի ունենալով արդյան անտեսության խոշոր նշանակությունը ժողովրդի բարեկեցության համար, պետք է անխոնչ աշխատել նրանց բարեկավման վրա: Շատ ցավալիք յէ, զոր այդ ձյուղի վրա հաճախ այն ուշադրությունը չի գարձգում, զորին նա իրոք արժանի յէ բոլոր լեռնային յերկրներում:

Ճիշտ չեր լինի սակայն, ընդհանրապես պնդել, զոր մինչև հիմա գոշինչ կամ շատ քիչ բան և արգած ալպերի բարեկավման ուղղությամբ: Նորագույն ժամանակներում, այն և 19-րդ դարի կիսից մինչև այսոր, զլիսավորապես նվեյցարիայում, Ավստրիայում և Բավարիայում խոկապես զոր հաջող աշխատանք և արդին տարվում: Հեռավոր ալպյան յերկրներում ել, բնշապես յերեւմ և, այստեղ ու այնտեղ իրեն համար ճանապարհ և բաց անում այն գիտակցությունը, զոր նպատակահարմար ձեռք առաջ տարվող արդյան անտեսությունը լեռնային յերկրների անտեսության հիմնական ճյուղերի շարքին և պատկանում:

Ա. Ա. ԶԻՒ ՄԻԱՅ

Դ. Ռ Ա Խ Ա Ա Բ Ա Զ Ի Ն

1. «Ա. ԶԻՒ ԿԱԾՄ «Ա. ՄԻԱ ԳՈՎԱՓՈՐԻ»

«Ալպեր բառի բացատրությունը առաջ կարիքը կա, վորով-նեան դրա նշանակությունը հաճախ տարբեր և ըմբռնվում։ Եաւ անզամ պարզ չի լինում, թէ կասկածելի զեպքերում «ալպ» ասեցի ինչ պետք և հասկանալի Այդ ուղղությամբ հաճախ հայացք-ների մեծ տարրերություն գոյություն ունի»։

Ալպեր ասելով նաևկազմում են լեռներում գՏնվող այն վայրե-րը, վարոնի ծովի մակերեսի վրից ամենամիջը 900¹⁾ մետր բարձրու-րիս վրա յին բնինում, տուիս բարենարաս յեղանակի բնրացքում այնակ հած անառուններին կիր են մատակարարում առածելու մի-ոցով յիւ վարեկ, թիյել բնակավայրից անջատ են անեստափառում, սակայն երա են որպանական կտավի մեջ են գՏնվում։

Այս վորոշման իմաստով միջին լեռների վրա յել ալպեր կա-րող են պատահել, յեթե այդ գաղափարին առաջադրված պահանջ-ներին նրանք բավարարում են։

Բելա Բնելենդին ասում է՝ «Ալպեր» են անվանվում լեռնային յերկրներում գտնվող այն արոտները, վորոնք իրենց դիրքի և կլիմայի շնորհիվ զիլակիրապես միայն ամառվա ընթացքում են ողագործվում ալպերում կամ մուտակայքում պահվող անառուն-ներն արածեցնելու միջոցով։ Ալպերի մեջ են մտնում նոն այդ արատների մեջ գտնվող կաթնառանասական շենքերը, պատապա-րանները, մարգագետինները, նույնական և պատահական վարելա-հողերն ու ծառերով ծածկված հողամասերը (անտառ, պուրակ, մացառում)։

Բարձրության վերաբերմամբ Բնելենդին լրացուցիչ ավելաց-նում է, վոր ալպերը տարածվում են ձմեռային բնակավայրե-րից վերև։

Առաջա շարունակում է. — «Ալպյան մնանառության տակ հաս-

1) Անդրկոմիկառում 1600—1700 մետրից վոչ պահան

կանում ենք ալպյան արտաների գյուղանասությունը՝ անառնարուծության ու կաթնատնահսության ներառմամբ, ալպյան անտառների շահագործման հետ միասին: Ալպյան անտեսությունը չի կարող իշխութեայն անտեսության համարվել, վորագնեան դա սովորաբար միայն ամռանն և տարցում և հովան գյուղատնասեսության կամ թե առնվազն հովանի մարդադեմնային տրնահսության հետ սերտ կազ և ունենամ: Անփականատիրական հարաբերություններն ել ցույց են տալիս, վոր ալպերն այսոր, յեթե նրանց շահագործումն ինկատի անհնանք, հազիմներին և պատկանում: Կան զելքեր, վոր ձմեռային կերն ալպերն են մատակարարում:

2. Ա.ՊԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒԹԻՄՆԵՐԻ

Ալպյան անտեսությամբ զրագվողների համար անհրաժեշտ է, վոր նրանք կարողանան իրարից վորոշակի առարկերի առանձին տեսակները և այդ հարցում վորոշ հախաղիտելիքներ ձեռք բերեն, քանի վոր ալպերը տարրեր անսակներով են սառարածանվում, դասավորվում ու կոչվում: Այս համելապես անհրաժեշտ է ալպերի վիճակագրությունը կազմակերպիլու, ալպյան մատյան հիմնելու, ալպերն ստուգով և մրցանակ բախուզ շրջիկ հանձնաժողովի հարցացուցակի մեջ մտցնելու, հիմնավորված կործակներ կազմելու և այլ նպատակների համար:

Ալպերը կարող են սառարածանվել բայ իրենց բարձրադրութ, սեփականատիրական հարաբերությունների և, վիրջապես, բայ նրանց վրա արածող տնտեսնի տեսակների:

Բայ նույզմանի¹⁾ եթելն ալպերն սառարածանում և հետեւյալ կարգերի՝ 1. վոշխարի ալպեր, 2. կոփի ալպեր, 3. նախալպեր: Առաջին յերկու սառարածանութեաների հիմք և ընդունված արածող անտառնի տեսակը, իսկ յերկրագին՝ ալպերի դիրքը:

Նույզմանի արդուսի սառարածանութեան անբնակունելի յև համարում: Նա հիմք և ընդունված միայն ալպերի դիրքը և բայ այսմ ել տարրերում և՝ 1. բարձր ալպեր, 2. միջին ալպեր և 3. նախալպեր:

3. ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԲԱՅ ԲԱՐՁՐԱԲՈՒՑՈՒՆ

Բայ նույզմանի առաջին դասում մեջ են մտնում ձյան սահմանից՝ 2400 (2460) մետրից սկսած մինչև 1800 (1860) մետր, ծովի մակերեսույթից բարձր ընկած արտաները²⁾: Այս դպրին

Վանդիմիներդի տնօժանում և վիերին պայման շրջան, նկատի ունենալով նրա բուսականությանը: Այս չըջանում աճում են ցածր, բայց առմեջ արտառաներ ունեցող արգյան խոտեր, արտաք սեղի ցածր տեսակներ ու մասունքներ, կիսամացանոներ ու քարաքուներ:

Ցերկրորդ զստին իր մեջն և առնում արտաների զգալի մասը և իջնում և 1800 (1860)-ից մինչև 1200 մետր բարձրության²⁾, ցերեկն էլ ավելի ներքեւ:

Ըստ Վանդիմիներդի այս զստին ընդգրկում և ստորին պայման շրջան ու յեղինիների³⁾ չըջանը: Փարթամ ու մննդարար բուսականության շնորհիվ արգյան ընտափը խոտեր են աճում այսակուց: Այս զստում հետզհետեւ ավելի ու ավելի յին յերեան զարիս ծառեր (ցածր, զետեսատարած ծառերի տեսակները տեղի յին տալիս բարձր յեղինիներին, կեղրիներին — *Pinus Cembra, Arve և Larix*):

Ինչպես վերին արգերում, նույնպես և այսակու մարդը մշտական բնակություն չի հաստատում: Ամսառոյին ամբոններին նա այդ արտաներում չերեւում և վորովն մի ստարական, զվարծանուում և ազատ և ուրախ կյանքով, սակայն կարճ ժամանակից հետո նորից իջնում և սարնիվայր⁴⁾:

Ցերկրորդ զստին բնդգրկում և նախարարային չըջանը, վորը վորովն միջակայան և ծառայում զաշտի ու արգերի միջն: (Vorsässen, Maiensässen, Mayens): Այս զստին շատ և նպաստում կարգավորված արգյան անտեսությանը, վորովհետեւ նրա շնորհիվ նաւարափոր և լինում մեծ չափով խնայիլ զաշտի մարզակետիները: Այսակու, ուր այս զստում արգեր չկան, ամեն տարի զարնանը, սուրբ բարձրանալուց առաջ, զաշտի մարզակետիներին ամբողջութին կեր են զանուում անսասաններին, մի հանգամանք, վոր զգալի չափով նվազեցնում և ձմեռվա կերի բանակը: Մոտի մակերեսությունից 1200 մետր բարձրությունից սկսած այդ արտաները իջնում են մինչև զաշտը՝ 840, նույնիսկ 600 մետր⁵⁾: Այս զստին վահաներեզն անվանում և յենթալպյան կամ աճարենու չըջան: Այսակու մարդը վորովն մշտական բնակիչ ապրում և տառնձի:

1) Հարաստանում 3800 (4000) մետրից մինչև 2800 (2600) մետր:

2) Անդրկովկասում՝ 2600-ից մինչև 2000 մետր:

3) Անդրկովկասում՝ յենթալպյան զստին և մասումը ավելի ցածր ընկած լեռնամարգագետներին, յենթալպյան զստին կամ վերին անտառային զստին:

4) Անդրկովկասում այս զստում անգույն հանդիպում են արքեն մշտական բնակավայրերի:

5) Անդրկովկասում՝ 1800—1700 և մինչև 1500—1300 մետր (լեռնամարգագետներին, յենթալպյան զստին կամ սուրին անտառային զստին): Առև. Խճր.

ձիթներում կամ փոքրիկ գյուղերում: Այս գոտում ալպյան խոռոշ զգալի կերպով կորցնում և իր աննդարարությունն ու հոստավետությունը: Այսաւելի բուսականությունը գնալով ավելի յև նմանավում դաշտի մարդագետիների բուսականության: Սակայն այսաւելի բնակավայրերի մոտերքում արդեն հասնում և գարին, աշորան ու կարտոֆիլը և սեպտեմբերին՝ կեսանենու պատուղները:

Կոպավոլին ստորին գոտին անվանում և տերեւոյր անտառի շրջան՝ 800 մինչև 1300 մետր բարձրությամբ: Այս կազմում և աճարենու անտառի շրջանի վերին սահմանը և ունի մոտ հինգ ամիս տևող ձմեռ: Անտառի հետ միասին մարդագետինն այսաւելի կուլտուրայի գլխավոր տեսակն և կազմում, ոգտագործվելով վորապես արտօն կամ խոտնարք: Արդերքում այս գոտու մեջ են մասնում այսպիս կոչված մայիսանիստերը, նախանիստերը, նախալեռները, նախարռուները կամ նախալպերը¹⁾: 1100—1200 մետր բարձրության վրա հետզհետեւ զադարում և պայտառու ծառի աճումը և հետզհետեւ սկսվում և խեկական ալպյան ֆլորայի զարդացումը: Հացահատիկներն ու կարտոֆիլը զեր նորմալ աճում ունեն, բայց ցորենն այս գոտու բարձր սահմաններում խիստ վտանգի յել յենթարկված: Այս գոտում կաթնատնտեսությունը հետ և մեռմ հոգում մատադ յեղջյուրավոր անասնապահության: Անտառները գոտում կերակրվելու փոխարեն վեպետացիոն ժամանեակաչքանում կանոնավոր կերպով գուրս են բերգաւմ արոտ:

Փատերել անտառի շրջանն ընդգրկում և այսպիս տաճ՝ միջյան գոտին (միջին ալպեր) 1300—1800 մետր բարձրությամբ, մոտ 6 ամիս տևող ձմեռով:

Այս գոտին փշտաներն խիստ անտառի վերին սահմանն և կողմանում: Տիրողն այստեղ արտօնային անասնությունն է: Արտաները կարող են ոգտագործվել հունիսի սկզբից կամ կեսերից մինչև սեպտեմբերի սկիզբը կամ կեսերը: Կաթնատնտեսությունն այս շրջանում միանգամայն հետ և մեռմ տեղի տարսով կենդանիների աճեցողությանը:

Այս գոտու վերին սահմանի մոտերքում անտառը նոսրանում և և այստեղ ու այնուեղ առախմբեր են յերեսում: Ավելի լի բարձր յերեսում են մենակ ընկած կոճղոս ծառեր և ի վերջո,

1) Այս անունները մինչույն մետքն են արտօնայում: Նոյն բան բարձրացնականացը, նոսագործակի մայիս ամսին (սովորաբար մինչև մայիսի վերջը), կենդանիները պահվում են ավելի շատք բնականացներում, պարզուացրեր շրջաններու զերծնացիների մոտ վերահիշյալ տարրեր անուններ են կըսմ (տես՝ Stebler. Alp-und Weidewirtschaft 1905): Ման. Խ. Ցհ.

Էլ ավելի բարձր՝ իրենց վոզորմելիք պոյությունը քարշ են տալիս դեռևսատարած մացառները։ Ծրուաչունչ խիստ ձմեռը, ձյան ձնչումն ու վեղեատցիոն կարճ ջրջանը թույլ չեն տալիս, վոր այս բարձունքների վրա անտառներ անեն։

Արօյյան արտաների պատին մատագրապես գտնվում է 1800-ից մինչև 2400 մետրի միջեւ և մոտ 9 ամիս տևող ձմեռ ունի եկտ առասաւաններ հաղիս են նկատվում այս ջրջանի ստորին սահմաններում, իսկ վերին սահմաններում ծառերի առանձին տեսակների թույլ ամռացներ կան միայն։ Արեգունի լանջերի գետինը հաւիսիսի վերջից մինչև սեպտեմբերի վերջը պատ և ձյունից։ Տավարը բարձրանում է մինչև 2000 մետր Դրանից այն կողմ վաշխարներն ու այժենը միայն կարճ ժամանակով սակավ կեր են դանում (վոչխարի ալպեր)։

Իմ կարծիքով ալպերի ստորաբաժանումն արդքան ցածրից չպիտի սկսել, վորովնեան հաճախ 600—700 ու 800 մետր բարձրության վրա տաճանձին բնակություններ կամ դյուղեր, այսինքն մշտական բնակություններ։

Ալպերի դազափարի իմ սպած վորոշումից հետեւմ և, վոր յետ չեմ կարող նախալարերն ընդունել այն զոտին, վորը ծովի մակերեսութիւնը 900 մետր ավելի ցածրից և սկսվում։ Իմ կարծիքով, ալպեր և հետեւյալ ստորաբաժանումն ընդունել.

1. Նախալար՝ 900-ից մինչև 1300 մետր.

2. Միջին ալպեր՝ 1300-ից մինչև 1700 մետր.

3. Վերին ալպեր՝ 1700-ից բարձր մինչև ձյան սահմանը,

Նախալարի նպատակուր են մանավանդ հորթերի և կաթուուու, անասունների համար։ Միօյին ալպերում մատադ անասունների հետ կարելի յե նաև կաթնատու կովեր պահել ինչ չափով վոր այս ջրջանները զեռ հարմար են զգայուն կաթնատու անասունների համար։ Կաթնատու անասունների համար ալպերը պետք ե մատիկ, ըստ կարելույն պաշտպանված և վոչ շատ թեք լանջերով լինեն։ Վերին ալպերի վրա կարևիլ յե արածեցնել տավարի 1—2 տարեկան մասաւ կենդանիներ։ Հզի կովերին չտփազանց բարձրացիր ալպերում չի կարելի արածեցնել, վորովնեան բարձր ընկած արտաների լանջերը հաճախ շատ թեք են, կեր փնտեկն այսանդ զմվար և և հաճախ ել դրանք միանգամայն անհյուրընկալ են։ Այն բարձրադիր ալպերը, վորոնք տավարի համար անմատչելի են, ծառայում են իրեն ամսան արոտ¹⁾ վոչխարների համար,

¹⁾ Անգրկավկասում հարավային դիրքի և սոսրին զոտիների ավելի տաք կոյմայի չնորդից, բարձրալեն ջրջանները սահմանները թե ընդհանուր անմատ-

**4. ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԸՍՏ ԱԼԳԵՐԻ ՎՐԱ ԱՐԱԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋՄԱՆԱՑԽԱՎԱԿՆԵՐԻ**

Հստ արածող անասունների տեսակի — ալպերը հետեւյալ կարգերի յև բաժանվում.

1. Տափարալպեր, 2. ձիալպեր, 3. վաշխարալպեր և 4. —այցալողեր:

Տափարի ալպերը իրենց հերթին ստորաբաժանվում են — ա) մասապ անասունների ալպերի, բ) կովերի ալպերի, գ) ցուլերի ալպերի և դ) յեղների ալպերի: Եվելյարիայում անվանում են տափարի ալպեր նաև այն ալպերը, զորուղ զիլիավորապես հղի:

Էթե ըստ նրանց տանձին զուշների, մանավանդ արեգունի զիրքերում ավելի վերէ են բարձրանում՝ Արեմյան Յեղրապայի համատառթյամբ: Ամսային արտօն հանգիւուց զոտու վերին սահմանը 3000 մետրից (Նովկայան զիլիավոր յենուշդիայի արեմյան մասում) մինչև 3700—3800 (Արագած, Զանգեզուրի յենուշը) մետրի վրա յեն զոնվում Եղանակի «Վերին ալպյան զոտու» համապատասխան ալպյան զոտին իշխում է մինչև 2400—2700 մետր: Խուն այսուկ ցածր է, նողը բարձրարու ու սելլեֆը խիստ կարտվում, ուստի և արածներն այսուկ միշտ զոյլարների համար են պրատին: Ավելի ցածր՝ մինչև 1800—2000 մետր բարձրացնելունը, տարածվում է յենթալպյան զոտին (ինչպես անվանում են Կովկասյան աշխարհացիւները. ու Եղանակի ստորին ալպյան զոտուն, կամ ավելի ճիշտ՝ նրա վերին մասին և համապատասխանում): Այսուդ սելլեֆին, բարձրարության, բաւականության, կարու են արածներ կամ զոյլարներ կամ ավելի համար մեծատագարր: Բաւականության այսուկ այնքան բարձրանուեկ է, վար կարելի յև նեճել, բայց լանջերի զառիվերությունը, ճանապարհների բացակայությունը և զյուղերից նեսու զանվելը զմգարացնում և այս տարածությանները զորպես խունարք շահապործելը: Սրանց մեծ մասը զորպես արտօն պատագություն է Ավելի ներքեւ 2000-ից մինչև 1400—1500 մետր Անդրկովկասի անտառազուրեկ շրջաններում ընկած և յենային մարգագետնների և յենային ատափատանների զոտին, վարի մեծ մասն Անդրկովկասում զարելանոց և զարձրած: Մնացած չներկված մասը խունարքներ են (լոսի, Աղբարա, Լեռնային Բարձրագույն, Ախալբարտէ, Մալիա) ու արածներ (Արագածի առարին մասը): Այլ ավելի ցածր, միջին յենային ու ստորին զոտիներում ձմեռային արածները և մասամբ ատափատանների խունարքներն են զոնվում: Անդրկովկասի անտառային շրջաններում, անտառի վերին սահմանից (1800—2000 մետրից) ցածր անտառային զոտու: կերային տարածությունները՝ անտառային մարգագետններն են կողմամբ, վարպետ անտառանատամից նետու յեն ստանցելը: Այս մարգագետններին առավելագույն վարպետ խունարքներ, ավելի սակագ վարպետ արածներ են պատագություն և անհեռմիջելի ներլու զեզրում նրանք շատուս կրկին անտառով են ծած կը ուն:

առաջար ևն պահում առարքը: Զիս ալպերի մեջ տարրերում ևն հովտակի ու զամբիկի ալպեր Տարրերում ևն նաև վոչ կաթնառու անառունների ալպեր, վարի մեջ մանում ևն վերահեշտ բոլոր ալպերը, բացի կովիրի ալպերց:

Առան ևն կոչվում այն ալպերը, վորոնց վրա տարրեր տեսակի անառուններ ևն արածում: որինակ՝ տավար ու ձիեր, կամ տավար ու վոչխարներ և այլն: Այս անվան տակ կարելի յէ նաև այնպիսի ալպեր համկանար, վորոնց վրա տարրեր տարիքի կամ տարրեր սկսի անառուններ ևն արածում: որինակ՝ կովի ալպերի վրա կովիրի հետ նաև մատաղ անառուններ, կամ թե մատաղ անառունների ալպերի վրա, նրանց կողքին նաև յեղներ և այլն:

Այս հատկածի մտախն ավելի մանրամասն կիսովի վոչ կաթնառու անառունների ալպերը և չեղալպերը դլուխներում:

Գ 1. Ա Խ Կ Ա Յ Բ Ե Ր Կ Բ Բ Դ

1. ԱԼՐՅԱՆ ՏԵՇԵՍՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալրացման նորօնակիր. — Այն վերջնական նպատակը, վորին պատշաճ կրպակ տարգաղ ալպյան անտեսությունն և ձգում, պարզ խոսքերով արտահայտած, հետեւյալն և այնպիս անել, վոր պատիւմ կրաքային չափ ուս անտեսությունն կորուանան սնվել: Այս նպատակին համեմու համար շատ կեր և պահանջվում, վոր ալպյան արտահային ու ալպյան մարգագետինները նպատակահարմար մշակելով ու խռամելով միայն կարելի յե ստանար:

Այսպիսով, ըստային յերկրներում ալպյան անտեսությունն անառարուծության ու անառապահության հիմքն ևն կազմում:

Շատ աեղին և ասում Պուսն ալպյան անտեսությունը նպիրված մի հոգվածում:

«Այս առանցքը, վարի շարժն ամրազ ալպյան անառարությունն և պատշաճ, վոչ մի կոսկած չկա, մեր ընտանի կենզանիներն են և նրանք եւ պետք և լինեն, Յեկ այս այս պատճառով, վոր ալպյան անտեսությունն իր բազկացուցիչ մասերով ինքնանպատակ չե; այլ նա բացառութեա մի միջոց և նպատակին հասնելու համար, Մենք պարարտացնում ենք ալպերը վոչ միայն նրա համար, վորպեսզի խռոր լավ անի, այլ վորպեսզի մեր ալպյան կենզանիներն ավելի շատ ու ավելի լավ կեր ստանան: Մենք ալպյան անտեսությունները մեր վոչ այնքան նրա մասերի անձան համար, այլ դժբահպատակ, վորպեսզի անտառը մեր արաները պաշտպանի: Մենք շարուցնում ենք նահային գայթերը վոչ թե շոր արածությունն ստանալու համար, այլ վորպեսզի անառունների որոտագայթերն ավելի ընդունակինք և այլն: Անուսան և և նո եւ կը ինի հոգսի զըխագոր տառիկան

արոտերի ու արոտների զրու Անաստաների միջոցով միայն քանի զոր մէնք՝ մորդիկան խոռահիկերներ շնչու — ստունում ենք կաթ, յուղ ու ձարագ, միս ու կաշին Այս պատճառով եւ պետք է միշտ մտանանչիք, զոր մեր ընտանի կենդանիները, առաջին հերթին տափարք, ամբողջ արայան անտեսության ու շաղրության կենաց բնի և պետք է լինենք:

Հարթավայրի արոտների հանդեպ իրենց ունեցած առավելությունների շնորհիվ, աղջյան արոտներն անասնարութության կենաց ստուռ աղջյուռներն են հանդիսանում: Նրանք ամենից շատ բարենպաստ են դեռահաս ընտանի կենդանիներ, զիմավորապես տափար և ձիեր բուծելու համար: Աղջյան արոտների նպասակը, սակայն, այս ուղղությամբ կարող են այն զեպքում լրիվ ու միանգամայն ի կատար ածվել յերբ կարտադրվի առաջ ու բազուկ կեր, յերբ բավարար չափով ընդարձակ ու պահանջներին համապատասխանող գոմեր կցինվեն ու յերբ առող մատզաշ կենաց դանիները լավ կինամզվեն: Զայտի մոռանալ, զոր մատզաշ որպահնիզմը դեռ այնքան դիմացկուն չեւ արտաքին աղղեցությունների վերաբերմամբ, ինչպես արդեն հասակն առած կենդանիների որդանիզմն եւ Առաջին հերթին՝ աղջերը պետք և տափարի բուծման պահանջներին ծառայեն, այսինքն ընտանի կենդանիների այն տեսակին, զորը ժողովրդատնտեսության և մասնավոր անտեսության համար խոչըր նշանակություն ունի: Սակայն մատզաշ ձիեր ու յեղներ եւ պետք և աղջելի մեծ չափերով բուծվեն, քան մինչև այժմս տեղի յեւ ունեցել:

Աղջյան անտեսությունը նաև հասակն առած ընտանի կենաց դանիներ պահնելու նպատակն ունի, լինի այս նրանցից տվյալ ժամանակաշրջանում ոգուտ քաղելու, կամ եւ ամառելու համար: Կովերը կաթնատու, անասունների աղջերում կաթ են տալիս, զորը տեղն ու տեղը պահիր ու յուղ և դարձվում: Հասակավոր ձիերն ու յեղները, վոշխարները, այծերն ու խոզերը սովորաբար աղջերում վճռ մի ոգուտ չեն բերում¹⁾, բացի աղջից և ձիերի ու յեղների պատահական աշխատանք կատարելուց: Այս ողումը, զոր այս կենդանիները բերում են իրենց տերերին, նկատելի յեղատնում աղջից վերադառնուլուց հետո: Հասակն առած ձիերն ու յեղները աղջեր զալով կաղզուրվում են: Աղջերում կաթնատնտեսական մնացորդներով ու սովորական կերակրումով զիրու-

1) Հեղինակը թեև նկատէ ունի միայն կաթից ստացած ողումը, սակայն աշխաթող և որեւ այն հանգամանքը, զոր այծերի կաթը լայն գործածություն ունի աղջերում: Թիշ աղջելի պահան նշանակություն ունի վոշխարի կաթը, զո-

յած խոզերը, ինչպես նաև մատաղ դիրացած յեզները բարձր գնով են ծափակում։ Վոչխարները չաղանում են, նրանց բուրզը յերկարում և և այլն։

Այն նպատակը, վորին ծոռայում և ալպերը, դարների ընթացքում փոփոխվել են նրանք մեծ չափերով ծառայել են մատաղ անասուններ բուծելու նպատակին։ Յերրեմն ավելի ուշադրություն և գարձակել այնանդ կովեր արածացնելու վրա Նախկին ժամանակներում չատ յերկրներում ձիերի ալպերն ավելի չատ եյին, նոր ժամանակներում նրանց թիվը պակասել եւ։

Յերկու զլիսամփոր խնդրում սակայն, ալպյան տնտեսության նպատակը հազարամյակների ընթացքում նույնն և մեացել Նախ անասուններին բնակավայրից հեռու վայրում արածացնելով այստեղ ունեցած հողի մի մասն ազատվում եւ, վորով հնարավոր և զառնում ձմռան պաշար հավաքել, սրանով, վերջին հաշվով, հնարավոր և լինում ալելի մեծ թվով անասուն պահեր Յերկրորդ՝ անասուններին նորպես տանհելով նրանց առողջապահական դրությունը բարեկավում եւ, վորովիսի հանդամանքը հետազայռում մանրամասն կրացատրվի։

2. Ա.Վ.ՎԱՅՐԱՆ Ա.Ի.Ա.Ե.Լ.ՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նպատակահարմար ալպացման խոչոր նշանակությունը միանագամայն ընդունված և գիտության ու գործնական կյանքի կողմբց։ Ամառային թարմացման այդ հրաշալի ձեր դեռահաս կենաղանիների հետազա առողջության, ուժեղության և գեղեցկության ապահով գրավական և տալիս Այդ «Լուսավոր բարձունքներում» ալպերը նաև կենդանու ամբողջ մարմնակազմի վրա բարենպատ աղղեցություն են ունենում։ Լեռնային յերկրներում վագուց արդեն հայտնի յե, վոր նպատակահարմար ալպացումն առաջնակարգ նշանակություն ու տեսական աղղեցություն ունի առողջ, դիմացկուն և ըստ ամենայինի արդյունավետ անասուններ զարգացնելու գործում։ Կենդանու առողջ և ամուր մարմնակազմը միայն հնարավոր և գարձնում նրա վրա հետազայռում արվելիք պահանջները լրիվ ու ամրողջավիճ կատարել Առողջության հասկացողությունը մոտավորապես համանիշ և կենառնակության և զանազան հի-

րը վորոշ տեղերում առնմանափակ շափով նույնագեն ոզտագործվում եւ Անգրեկովկասում, ինչպես հայտնի յե, վոչխարի և այժի կամը մեծ տեղ և զրագում լինալին անառության մեջ։

